# *Արձանագրություն 3*

**ՀՀ ԱՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-26/14 ծածկագրով Արարատ համայնքի փողոցների փոսային նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված Գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

Ք. Արարատ 09.04.2026թ.

ժ. 11:00

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ՝ Կարեն Քենդրցյան (ԳԱՊ)

Հանձնաժողովի անդամներ՝ Նունե Կարապետյան (ԳԱ)

Արտակ Զաքարյան (ԳԱ)

Արմեն Մարտիրոսյան (ԲԱ)

Հակոբ Սեդրակյան (ԲԱ)

Հանձնաժողովի քարտուղար՝ Կարեն Մելքոնյան (ՄՀՄ)

**1. Գնանշման հարցման ընթացակարգին մասնակիցների կողմից ներկայացված հայտերի անհամապատասխանությունների շտկման մասին**

1.1 Ընդունել ի գիտություն, որ «Ռոադշին» ՍՊԸ և «Ա.Ա.Մ.33» ՍՊԸ կոնսորցիումը, «Ռ ԵՎ Հ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ն և «Դը Բեստ Շին» ՍՊԸ-ն օրենքով սահմանված ժամկետում շտկել են հայտերում առկա անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ -5. դեմ – 0:

**2. Հայտերի գնահատման մասին**

2.1. Ընդունել ի գիտություն, որ ընթացակարգի բոլոր մասնակիցները ներկայացրել են հրավերի պահանջներին համապատասխան հայտեր:

2.2 Ստորև ներկայացվում է հանձնաժողովի կողմից մասնակիցների հայտերի գնահատման արդյունքները.

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Հանձնաժողովի կողմից տրված գնահատական |
|---|---|---|
| 1 | «Դը Բեստ Շին» ՍՊԸ | բավարար |
| 2 | «Ռ ԵՎ Հ Քոնսթրաքշն» ՍՊԸ | բավարար |
| 3 | «Բագգեռ Գրուպ» ՍՊԸ | բավարար |
| 4 | «Ռոադշին» ՍՊԸ և «Ա.Ա.Մ.33» ՍՊԸ կոնսորցիում | բավարար |
| 5 | «Ճանապարհ Գրուպ» ՍՊԸ | բավարար |

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

**3. Ընտրված մասնակից ճանաչելու մասին**

3.1 Հիմք ընդունելով բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքը՝ հանձնաժողովը որոշեց ընտրված մասնակից ճանաչել «Դը Բեստ Շին» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ -5. դեմ – 0:

**4. Հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին**

4.1. Հանձնաժողովը որոշեց.

ա) ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքելու մասին հայտարարությունը հրապարակել օրենքով սահմանված կարգով:

բ) ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքել «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված անգործության ժամկետի ավարտից հետո:

գ) ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը ծանուցել անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորրորդ աշխատանքային օրը՝ համաձայն

«Գնումների մասին» ՀՀ Օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ կետի:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

**5. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

5.1. ՀՀ ԱՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-26/14 ծածկագրով ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրի կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը 11:00-ին, հասցեն ք. Արարատ, Շահումյան 34:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

Հանձ. Նախագահ (ԳԱԴ)՝ ____________________ Կ.Քենդրջյան

Անդամներ՝ (ԳԱ) ____________________ Ն.Կարապետյան

(ԳԱ) ____________________ Ա.Զաքարյան

(ԲԱ) ____________________ Ա. Մարտիրոսյան

(ԲԱ) ____________________ Հ.Սեդրակյան

Քարտուղար (ՄՀՄ)՝ ____________________ Կ. Մելքոնյան